ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱԲՈՎՅԱՆ 2017թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի ընթացքում Աբովյան համայնքի ղեկավարն իր աշխատանքային գործունեությունն իրականացրել է համայնքային ծառայողների, հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով իրեն վարապահված լիազորությունների շրջանակներում, քաղաքական որոշումների ընդունմամբ և դրանց կատարման համակարգմամբ: Աբովյան համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել և համակարգվել են հետևյալ աշխատանքները ըստ ոլորտների՝

Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառ

Կատարվել է քաղաքացիների թվով 27 ընդունելություն, որոնց մասնակցել են 180 քաղաքացի, օրենքով սահմանված կարգով քննության են առնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց 3834-ից ավել դիմումներն ու գրությունները և ձեռնարկվել համապատասխան միջոցներ:

Խնամակալների և հոգաբարձուների նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով կատարվել են 73 արտագնա ուսումնասիրություններ, անչափահասների գործերով՝ 38 քաղաքացիների կյանքի հետազոտություն և 8 քաղաքացիների նկատմամբ սահմանվել է խնամակալություն և հոգաբարձություն:

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառ

Համայնքի բնակիչների համար ստեղծվել են բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով Աբովյանի համայնքապետարանի պաշտոնական՝ www.kotayk-abovyan.am կայքը: Կազմակերպվել են 3 հանրային լսումներ՝ 2015 թվականի բյուջեի տարեկան կատարողականի նախագծի, 2016 թվականի արդյունքահեն ձևաչափով բյուջեի, 2017 թվականի նորմատիվ իրավական ակտերի և բյուջեի նախագծերի քննարկման համար: Կազմակերպվել են նաև համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների թվով 2 նիստ 2017 թվականի նորմատիվ իրավական ակտերի, համայնքի քաղաքաշինական կանոնադրության մշակման և Աբովյան համայնքի մանկապարտեզների ծնողական վճարների բարձացման վերաբերյալ:

Ավագանու աշխատանքների կազմակերպման և իրավական ակտերի ընդունման բնագավառ

Կազմակերպվել և անցկացվել է ավագանու 30 նիստ, որի արդյունքում կայացվել է 171 որոշում: Համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 1334 որոշում և 268 կարգադրություն, կազմվել և ուղարկվել է 3189 ելից գրություն:

Ֆինանսների բնագավառ

2016 թվականի Աբովյան համայնքի բյուջեի եկամտային մասով նախատեսված 1 298 607.3 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 1 294 396.0 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ կատարվել է 99.7 %-ով, իսկ տարեկան ծրագրի նկատմամբ՝ 42.9 %-ով:

Հարկերի և տուրքերի գծով նախատեսված 263 100.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 310 039.7 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 120.2 %-ով, գերակատարվելով 27 773.3 հազար դրամով կամ կատարվել է 117.8 %-ով:

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան՝ նախատեսված 695 090.5 հազար դրամը հատկացվել է, պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումը՝ սուբվենցիան նախատեսված 100 000.0 հազար դրամի դիմաց հատկացվել է 47 553.2 հազար դրամ, արտաքին պաշտոնական դրամաշնորհը՝ ստացված միջազգային կազմակերպություններից, նախատեսված 10 319.8 հազար դրամի դիմաց կատարվել է 6 537.9 հազար դրամ:

Այլ եկամուտների գծով նախատեսված 240 413.2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 241 713.0 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ կատարվել է 100.6 %-ով: Բյուջեի ծախսային մասով նախատեսած 1 551 208.3 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 1 436 464.5 հազար դրամ, այն կատարվել է 92.6 %-ով:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների հատվածին հատկացվել է 251 798.9 հազար դրամ,

որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 17.5 %-ը:

Տնտեսական հարաբերությունների գծով հատկացվել է 77 926.8 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 5.4 %-ը: Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը բյուջեում արտացոլվում են տնտեսական հարաբերություններ մասում՝ բացասական նշանով, և հաշվետու ժամանակաշրջանում կազմում են 169 433.8 հազար դրամ՝ կատարվելով 74.3 %-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության համար հատկացվել է 353 604.6 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 24.6 %-ը:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության համար հատկացվել է 88 908.2 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 6.2 %-ը:

Հանգիստ, մշակույթ և կրոն ոլորտի պահպանման համար հատկացվել է 56 150.1 հազար դրամ, կազմելով փաստացի կատարված ծախսերի 3.9 %-ը:

Նախադպրոցական հիմնարկների պահպանման և վերանորոգման համար հատկացվել է 408 752.8 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 28.5 %-ը, արտադպրոցական հիմնարկների պահպանման և վերանորոգման համար հատկացվել է 192 418.5 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 13.4 %-ը:

Սոցիալական պաշտպանության ոլորտի համար նախատեսված 5 000.0 հազար դրամից հատկացվել է 4 670.0 հազար դրամը, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 0,3 %-ը:

Աբովյան համայնքի բյուջեի պակասուրդը (դեֆիցիտը) կազմել է 14 200.8 հազար դրամ:

Պաշտպանության կազմակերպման բնագավառ

Օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցություն է ցուցաբերվել զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպմանը: Օրենքով սահմանված կարգով վարվել է համայնքի զինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացվել է տարածքային զինվորական կոմիսարիատ:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողներին տրվել է 105 ճարտարապետահատակագծային առաջադրանք (կամ նախագծման թույլտվություն):

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցվել է ճարտարապետաշինարարական նախագծերը, տրվել է 85 շինարարության թույլտվություն, սահման-ված կարգով ձևակերպել է 39 շինարարության ավարտական ակտ, ինչպես նաև տրամադրվել է ավարտված շինարարական օբյեկտի շահագործման թույլտվություն:

Կանխարգելվել ու կասեցվել է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովվել է դրանց հետևանքների վերացումը:

Համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան տրվել է արտաքին գովազդ տեղադրելու 11 թույլտվություն, որի համար գանձվել է 8 201 000 դրամ:

Կատարվել է 12 133 քառ. մետր փողոցների ասֆալտի վերանորոգման աշխատանքներ, որի համար ծախսվել է 62 363 000 դրամ:

Բնակֆոնդի տանիքների վերանորոգման համար ձեռք է բերվել և համատիրություններին տրվել է 600 քառ. մետր ԻԶՈԳԱՄ շինանյութ, որի համար ծախսվել է 1 200 000 դրամ:

Կատարվել է 3590,0 քառ. մետր փողոցների նշագծման աշխատանքներ, որի համար ծախսվել է 6 000 000 դրամ:

Փողոցների խաչմերուկում տեղադրվել է 1 լուսացույց, որի համար ծախսվել է 5 000 000 դրամ: Կազմակերպվել է փողոցային լուսավորության թվով 980 պահպանման, կարգաբերման աշխատանքներ, ինչպես նաև 7 խաչմերուկների լուսացույցների կարգավորման աշխատանքներ, որի համար ծախսվել է 30 500 000 դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է քաղաքի աղբահանությունը և աղբավայր է տեղափոխվել 25 000 խմ կենցաղային աղբ, որի համար ծախսվել է 172 000 000 դրամ: Կազմակերպվել

և սանիտարական մաքրման աշխատանքներ են իրականացվել քաղաքի 670 000 քառ. մետր տարածքի վրա, որի համար ծախսվել է 33 800 000 դրամ:

Տրանսպորտի բնագավառ

Տրվել է համայնքի տարածքում մարդատար տաքսիների ծառայություն իրականացնելու 3 թույլտվություն, որի համար գանձվել է 595 000 դրամ:

Առևտրի և ծառայությունների բնագավառ

Տրվել է ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի և իրացման համար 47 թույլտվություն, ծխախոտի արտադրանքի վաճառքի և իրացման 43 թույլտվություն, որի համար բյուջե է մուտքագրվել 6 223 000 դրամ:

Տրվել է համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման 3 թույլտվություն, որի համար գանձվել է 544 000 դրամ:

Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին տրվել է ժամը 24.00-ից հետո աշխատելու 1 թույլտվություն, որի համար գանձվել է 550 000 դրամ:

Համայնքի տարածքում տրվել է թանկարժեք մետղաներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառքի 3 թույլտվություն, որի համար գանձվել է 500 000 դրամ:

Տրվել է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի 4 թույլտվություն, որի համար գանձվել է 1 800 000 դրամ:

Տրվել է համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի 6 թույլտվություն, որի համար գանձվել է 615 000 դրամ:

«Աբովյան» անունը, որպես ֆիրմային անվանում օգտագործելու համար տրվել է թույլտվություն, որի համար գանձվել է 200 000 դրամ:

Հողօգտագործման բնագավառ

Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանած պայմաններով աճուրդային կարգով օտարվել են բնակավայրերի նշանակության՝ 29803,55 քառ. մետր համայնքի սեփականություն համարվող հողամասեր: Աճուրդի արդյունքում համայնքի բյուջե է մուտքագրվել 73001,3 հազ. դրամ:

Տեղեկատվության բնագավառ

Լուսաբանվել են համայնքում տեղի ունեցած ավելի քան 105 միջոցառումներ, այդ թվում՝ մշակութային, սպորտային, երիտասարդական և սոցիալական: Հրապարակվել են 50-ից ավելի հայտարարություններ, որոնք վերաբերվել են հանրային լսումներին, տոնական միջոցառումներին, հանդիսություններին և սոցիալական ծրագրերին: Իրականացվել է համայնքում կայացած միջոցառումների տեղեկատվության տարածումը սոցիալական կայքերի միջոցով:

Փոխըմբռնման և համագործակցության հուշագրեր են կնքվել և այժմ էլ գործում են «Rostelecom», «GIZ» կազմակերպությունների հետ: 2016 թվականի դեկտեմբերի 29-ին հայտ է ներկայացվել UNESCO Learning cities ցանցին Աբովյան համայնքի անդամակցության համար:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ

Համակարգվել և կազմակերպվել է կրթության և մշակույթի բնագավառի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատանքային գործունեությունը, կատարվել են ուսումնասիրություններ և դիտարկումներ, տրվել են մեթոդական և մասնագիտական ցուցումներ:

Իրականացվել են.

- Սուրբ Ծննդյան տոներին և Ամանորին նվիրված միջոցառումներ, Աբովյանի թատրոնում ամանորյա անվճար ներկայացումներ, երեխաների համար բակային ուրախ միջոցառումներ՝ հեքիաթի հերոսների մասնակցությամբ, երեխաներին նվերների տրամադրում:
- Աբովյանի քաղաքային գրադարանում հունվարի 20-ին ԱՍԱԼԱ-ի 41 ամյակին նվիրված միջոցառում:
- Հայոց բանակի 24-րդ տարեդարձի առթիվ այցելություններ Բալահովիտի և Լուսակերտի զորամասեր:
- Մայրենի լեզվի օրվան նվիրված միջոցառում Աբովյանի գրադարանում:
- Մարտի 8-ին նվիրված միջոցառումներ - ծաղիկներ քաղաքի կրթական, մշակութային և առողջապահական հիմնարկների կանանց, աղջիկների վոլեյբոլի մրցաշար:
- Հայոց Ցեղասպանության 101-րդ տարելիցի օրը՝ երթ դեպի անմեղ նահատակների հիշատակը հավերժացնող հուշարձան, որից հետո՝ Սբ. Հովհաննես եկեղեցի, այնուհետև՝ այցելություն Ղարաբաղյան պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշակոթող:
- Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի համայնքային փուլ:
- Հայրենական պատերազմում տարած հաղթանակի և 1992թ-ի Շուշիի ազատագրման կապակցությամբ՝ այցելություն «Անմար կրակի» հուշարձանին, երթ դեպի Արցախյան պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձան, այնուհետև՝ Հայրենական պատերազմում տարած հաղթանակը խորհրդանշող Էլարի հուշակոթող: Այցելություն և նվերների հանձնում վետերաններին:
- Երեխաների իրավունքների պաշտպանության օր - Մանկական զբոսայգում գունավոր կավճանկարչություն և համերգային ծրագիր:
- Հունիս-հուլիս ամիսներին՝ ավարտական միջոցառումներ կրթական ենթակառույցներում:
- Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված քայլերթ՝ դեպի Արցախյան պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձան, Զ. Սահակյանցի անվան երաժշտական դպրոցում համերգ, Աբովյանի շախմատի դպրոցում շախմատի միջազգային բաց մրցաշար, վոլեյբոլի առաջնություն:
- Գրադարանավարի օրվան նվիրված միջոցառում գրադարանում:
- Աբովյան քաղաքի տոնին նվիրված միջոցառում քաղաքային մարզադաշտում:
- Երկրաշարժի զոհերի հիշատակի օրվան նվիրված երթ դեպի երկրաշարժի զոհերի հուշակոթող:

Աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառ

Համայնքի սոցիալապես անապահով 176 ընտանիքներին տրամադրվել է 4620,0 հազ. դրամ օգնություն:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բնագավառ

ՔԿԱԳ Աբովյանի տարածքային բաժնում գրանցվել է թվով 647 ծնունդ և 338 մահ: Նույն ժամանակահատվածում գրանցվել է թվով 260 ամուսնություն, 51 ամուսնալուծություն :